

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդում:

Գիրական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ Ներսիկի Հախվերդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Զոյա Թադևոսյան
Տնտեսագիտության թեկնածու,
Լուսինե Սարգսյան

Առաջադար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022թ. սեպտեմբերի 22-ին ժամը 14.00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ.Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. հունիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



S. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեղափոխության թեմայի արդիականությունը: 21-րդ դարը կարելի է բնորոշել որպես շարժունակության ժամանակաշրջան, իսկ դրա կարևորագույն դրսևորումներից մեկն այսօր աշխատուժի միգրացիան է, որը եղել և մնում է մարդկության զարգացման պատմության անքակտելի բաղադրիչը: Ժամակակակից համաշխարհային տնտեսության հիմնական բնորոշիչները տնտեսական գործընթացների և դրանց դրսևորման ձևերի ազատականացումն են, կապիտալի և տեխնոլոգիաների անընդհատ ավելացող հոսքերը, որոնց առավելագույն արդյունավետությունն ապահովող մարդիկ են: Այս պարագայում, մարդկանց տեղաշարժի՝ միգրացիայի ուսումնասիրությունն ու խնդիրների վերհանումն առավել քան արդիական է: Ժամանակակից աշխարհում միգրացիայի մասշտաբներն ու ընդգրկումը բերել է նրան, որ տարբեր հարթակներից պարբերաբար բարձրաձայնվում են միգրացիոն հոսքերի կանոնակարգման և կառավարման հրամայականները, որոնք մարտահրավեր են դարձել ինչպես միգրանտների ծագման, այնպես էլ նպատակակետ երկրների համար:

Միգրացիան յուրահատուկ դրսևորում է, այն միավորում է պետություններն ու ազգերը՝ ստեղծելով սոցիալական, տնտեսական, հոգեբանական, մշակութային և քաղաքական կապեր երկրների միջև: Մինևույն ժամանակ, միգրացիան շատ դեպքերում առաջացնում է լարվածություն, նույնականացվում է ահաբեկչության ու հանցագործությունների հետ: Այս պարագայում, շահագրգիռ կողմերի համար ի հայտ են գալիս միգրացիայի արդյունավետ կարգավորման հիմնահարցերը, որի համար անհրաժեշտ է համապատասխան մեխանիզմների և գործիքների առկայություն: Կարևոր է հաշվի առնել, որ աշխատուժի միջազգային միգրացիայի կարգավորման նպատակներն ու եղանակները տարբեր են միջազգային, տարածաշրջանային և պետական մակարդակներում:

Ընդհանրապես աշխատուժի միգրացիան բավական լուրջ մարտահրավեր է Հայաստանի համար, որտեղ անկախացմանը հաջորդող 30 տարիների ընթացքում հիմնականում առկա է բացասական հաշվեմնացորդ: Հայաստանի բնակչությունը դրսևորում է միգրացիոն ուրույն և հետաքրքիր վարքագիծ: Բազմաթիվ տեսաբաններ ու հետազոտողներ փորձել են բացատրել և հասկանալ այդ վարքագիծը ձևավորող հիմնական դրդապատճառները: Հայաստանի բնակչության միգրացիոն վարքագծի պատճառների վերլուծությունը բավական համակարգային մոտեցում է պահանջում և, ընդհանուր առմամբ, այն կարելի է

դասակարգել երկու խոշոր խմբերում՝ տնտեսական և ոչ տնտեսական շարժառիթներ: Մինչև 2020 թվականը ՀՀ միգրացիոն համայնապատկերը հիմնականում լրիվ այլ՝ սոցիալ-տնտեսական ուղղվածության էր: 2020 թվականի սկզբին COVID-19 համավարակի տարածումը, սեպտեմբերի 27-ին Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի նկատմամբ սանձաձերժված 44-օրյա պատերազմը (Արցախյան 3-րդ պատերազմ)¹, դրան հաջորդած՝ նոյեմբերի 11-ի հայտարարությունը, 2021 թվականի հունիսի 20-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ խորհրդարանական ընտրությունները, Ադրբեջանի ՋՈւ ներթափանցումը ՀՀ ինքնիշխան տարածք և մինչև այս պահը շարունակվող սահմանային լարվածությունը նոր իրականություն են ձևավորել ՀՀ միգրացիոն գործընթացներում, որի ընդգրկման շրջանակն ու զարգացման հնարավոր միտումները Հայաստանի համար ապաքնակեցման լուրջ մարտահրավերներ են դարձել: Եթե մինչև պատերազմը միգրանտների հիմնական մասի մղումները սոցիալ-տնտեսական համապարփակ խնդիրների արձագանք էին, ապա հիմա միգրացիոն գործընթացները Հայաստանում ստացել են առավել սուր անվտանգության հնչերանգ: Մյուս կողմից, «ուղեղների արտահոսքը» վտանգում է երբևէ նորարար և գիտելիքահեն տնտեսություն ունենալու հայաստանյան հեռանկարները:

2015 թ. Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) ձևավորել է նոր ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտություն: Ինտեգրացիոն միավորումն անդամ երկրներին հնարավորություն է տալիս օգտվել ընդհանուր շուկայի առավելությունից, ինչը կարող է դառնալ և՛ հնարավորություն, և՛ սպառնալիք Հայաստանի համար: Այս համատեքստում, աշխատուժի միգրացիայի կարգավորման մեխանիզմների հստակեցումն օրակարգային է ինչպես ամբողջ ԵԱՏՄ-ի, այնպես էլ հենց Հայաստանի համար, որն ինտեգրացիոն միավորմանն աշխատուժ «ներարկող» երկրներից մեկն է:

Արտասահմանյան և հայրենական մի շարք առաջադեմ մասնագետներ իրականացրել են համապարփակ վերլուծություններ՝ բացահայտելու համար աշխատուժի միգրացիայի կարգավորման հիմնախնդիրները (Ա.Սմիթ, Դ.Մասսեյ, Խ.Կոսեր, Մ.Ջ.Պիորե, Ջ.Արանզո, Ջ.Գերբեր, Ռ.Սկելթոն, Ջ.Քեյնս, Ա.Բուլատով, Լ.Կուրեկովա, հայ գիտնականներ՝ Ա.Դարբինյան, Ա.Մարկոսյան, Գ.Նազարյան, Դ.Հախվերդյան, Ջ.Թադևոսյան, Է.Սանդոյան, Թ.Թորոսյան, Հ.Բագրատյան և այլոք): Այդուհանդերձ, ակնհայտ է, որ ՀՀ միգրացիոն քաղաքականությունը

¹ Արցախյան առաջին պատերազմը՝ 1990-ականներին, Արցախյան երկրորդ պատերազմը՝ 2016 թվականի ապրիլին, իսկ Արցախյան երրորդ պատերազմը 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

նորովի՝ ԵԱՏՄ անդամակցության համատեքստում հետազոտելու գիտական անհրաժեշտություն կա:

Այս խնդիրները կարևոր ու անհրաժեշտ են դարձնում աշխատուժի միգրացիայի կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունը Հայաստանի համար, ինչով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ԵԱՏՄ-ում և, հատկապես, Հայաստանում, աշխատուժի միգրացիայի կարգավորմանն առնչվող խնդիրների սահմանումն ու լուծման հնարավոր արդյունավետ ուղիների բացահայտումն է: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել մասնագիտական գրականության մեջ առկա՝ աշխատուժի միգրացիայի տեսամեթոդական հիմքերը և տալ դրանց արդիականության գնահատականները,
- ✓ վերլուծելով միջազգային կազմակերպությունների վիճակագրական տեղեկատվական տվյալները՝ գնահատել աշխատուժի միջազգային միգրացիայի մասշտաբները, միտումները, դրսևորման առանձնահատկություններն ու ընդգրկման շրջանակներն ամբողջ աշխարհում,
- ✓ հիմք ընդունելով աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական բնույթը՝ հետազոտել դրա ազդեցությունը համաաշխարհային տնտեսության վրա,
- ✓ հետազատել աշխատուժի միգրացիայի միջազգային, տարածաշրջանային և պետական կարգավորման ինստիտուցիոնալ հիմքերը՝ ուսումնասիրելով միջազգային փորձը և Հայաստանում դրա տեղայնացման հնարավորությունները,
- ✓ վերլուծել ԵԱՏՄ երկրներում միգրացիոն գործընթացները՝ գնահատելով դրանց ազդեցությունն անդամ երկրների ժողովրդագրական իրավիճակի վրա,
- ✓ հենվելով առկա հետազոտությունների վրա՝ վեր հանել Հայաստանից դեպի ԵԱՏՄ մյուս երկրներ միգրացիան պայմանավորող հիմնական գործոնները,
- ✓ գնահատել ԵԱՏՄ երկրների տնտեսությունների մրցունակության վրա աշխատուժի միգրացիայի ազդեցությունը՝ հաշվի առնելով անդամ երկրների հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները,
- ✓ հաշվի առնելով ԵԱՏՄ անդամակցության արդյունքում ի հայտ եկած փոփոխությունները՝ գնահատել հայաստանյան միգրացիոն

քաղաքականության հիմնական խնդիրները և ներկայացնել լուծման հեռանկարները,

- ✓ բացահայտել Հայաստանի միգրացիոն քաղաքականության բարելավման ուղիները, ինչպես նաև կանխատեսել եվրասիական ինտեգրման քաղաքականության զարգացման հեռանկարները:

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության օբյեկտը Հայաստանի միգրացիոն հոսքներն են, իսկ հետազոտության առարկան՝ աշխատուժի միգրացիայի կարգավորման մեխանիզմները ԵԱՏՄ-ում:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության իրականացման մեթոդաբանական հիմքը առաջնային և երկրորդային տեղեկատվության հավաքագրման գործիքակազմի կիրառումն է: Առաջնային տեղեկատվության հավաքագրման համար իրականացվել է դաշտային աշխատանքներ: Կազմվել է հարցաթերթ սոցիոլոգիական հարցում անցկացնելու համար, որից հետո սոցիալական ընտրանքի հաշվիչի միջոցով հաշվարկվել է ընտրանքի չափը՝ հարցվող ռեսպոնդենտների քանակի անհրաժեշտ ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով:

Երկրորդային տեղեկատվության հավաքագրման համար հիմք են ծառայել հայազգի և արտասահմանյան տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, դասական և ժամանակակից տնտեսագիտական տեսությունների հիմնադրույթները, աշխատուժի միգրացիայի ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի պետական կառավարման մարմինների որոշումները, հաշվետվություններն ու ռազմավարական ծրագրերը, ոլորտին առնչվող մասնավոր կազմակերպությունների հաշվետվություններն ու ԵԱՏՄ անդամ երկրների վիճակագրական մարմինների տվյալները և այլն:

Միգրացիոն գործընթացների ուսումնասիրության համար օգտագործվել են հետազոտության քանակական և որակական մեթոդներ: Մասնավորապես, խնդիրը համակողմանի հասկանալու համար, հետազոտության շրջանակներում օգտագործվել են վիճակագրական, մաթեմատիկական (գրաֆիկական), համեմատական և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Քանակական մեթոդների օգնությամբ կատարվել են միգրացիոն իրավիճակի վիճակագրական վերլուծություն՝ հետազոտական հարցերին պատասխանելու համար: Այնուհետև, հիմք ընդունելով խնդրի քանակական վերլուծության արդյունքները, տրվել են նաև իրավիճակը նկարագրող որակական գնահատականներ: Ընդհանուր առմամբ, տեսության մեջ օգտագործվում են

երկու մեթոդներ՝ հիպոթետիկ-դեդուկտիվ, որն օգտագործվում է հիմնականում նեոկլասիկ տնտեսագետների կողմից, և պատմական-դեդուկտիվ, որն առաջ է քաշվել դասական և քեյնսյան տնտեսագետների կողմից: Չնայած նրան, որ հետազոտական երկու մեթոդներն էլ ունեն իրենց առավելությունները, այնուամենայնիվ, հաշվի առնելով միգրացիայի սոցիալ-տնտեսական բնույթը, ընտրվել է հետազոտության պատմական-դեդուկտիվ մեթոդը: Իսկ վիճակագրական տվյալների հետազոտման և վերլուծության նպատակով օգտագործվել են SPSS17.0 և Eviews 10 SV ծրագրային փաթեթները: Իրականացված տնտեսաչափական վերլուծություններում պահպանվել են էկոնոմետրիկ թեստերի ցուցանիշների էապես ընդունելիության սկզբունքները, այդ թվում՝ դետերմինացիայի գործակիցների միջոցով: Նշված գործիքների կիրառմամբ Իրականացված վիճակագրական վերլուծությունները հնարավոր են դարձրել բացահայտել մի շարք տնտեսական գործոնների այնպիսի փոխկապվածություններ, որոնք հնարավորություն կտան ընտրել ճիշտ թիրախներ և կիրառել նպատակաուղղված տնտեսական քաղաքականություն:

Արենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- հիմք ընդունելով 1970-2020 թթ. տվյալները՝ բացահայտվել են համաշխարհային տնտեսական աճի, միջազգային դրամական փոխանցումների, զարգացման նպատակով ստացված դրամական օգնությունների միջև փոխկապվածությունները, առանձին տնտեսաչափական մոդելների հիման վրա գնահատվել են աշխարհի մակարդակով դրամական փոխանցումների և կրթական մակարդակի, ինչպես նաև ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքի, դրամական փոխանցումների և զբաղվածության մակարդակի միջև կոռելյացիոն կապերը,
- Հայաստանի բոլոր մարզերի տնային տնտեսությունների շրջանակներում իրականացված սոցիոլոգիական հարցումների միջոցով բացահայտվել են երկրից դեպի ԵԱՏՄ երկրներ միգրացիոն հոսքերի ընդլայնման միտումների հիմնական դրդապատճառները և խնդիրները, տրվել են դրանց քանակական գնահատականները,
- Գնահատվել է ԵԱՏՄ երկրների տնտեսությունների վրա աշխատուժի միգրացիայի ազդեցության շրջանակը՝ բացահայտելով միգրացիայի համատեքստում տնտեսական գործընթացների և ցուցանիշների

(տնտեսական աճ, ֆիզիկական անձանց դրամական փոխանցումներ, գործազրկության և աղքատության մակարդակներ, նվազագույն ու միջին ամսական անվանական աշխատավարձեր) միջև առկա փոխառնչությունները,

- ԵԱՏՄ շրջանակներում մշակվել են միգրացիոն հոսքերի կարգավորման ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ վեր հանելով ոլորտի կարգավորումը խոչընդոտող հիմնական խնդիրներն ու առաջադրելով ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության բարեփոխման հիմնուղիներն ու դրանց ազդեցության հնարավոր սցենարները:
- Հայաստանում միգրացիոն քաղաքականության գործընթացների կատարելագործման համար բացահայտվել և հիմնավորվել են միգրացիոն քաղաքականության մշակման և կիրառման թիրախային մոտեցումները՝ ներգաղթի խթանման և ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում:

Հեղազոտության արդյունքների գիտազործնական

նշանակությունը: Ատենախոսությունում ՀՀ տնտեսության վրա աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցության գնահատման քանակական և որակական վերլուծությունների արդյունքները, ինչպես նաև միգրացիոն քաղաքականության ուղղությամբ առաջարկվող լուծումները կարող են օգտակար լինել հետագա տնտեսական քաղաքականության մշակման համար: ԵԱՏՄ շրջանակներում միգրացիոն հոսքերի կարգավորման մեխանիզմների արդիականացումը ու ներուժի ամբողջական բացահայտումը, աշխատուժի միգրացիայի կարգավորման արտասահմանյան փորձի՝ ՀՀ-ում և ԵԱՏՄ-ում տեղայնացման հնարավորություններն առանցքային կարևորության հարցեր են ինտեգրացիոն միավորման կայացման, տնտեսական գործընթացների և դրսևորումների արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետների, պետական կառավարման մարմինների արտաքին տնտեսական հարաբերությունների գծով պատասխանատուների, ոլորտին առնչվող մասնավոր կառույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

Հեղազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը:

Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփվել են ատենախոսության շրջանակներում հրատարակված 12 գիտական հոդվածներում: Հետազոտության արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի նիստերում և

համալսարանական մի շարք գիտաժողովներում և կլոր սեղաններում, Պեկինի Բիզնեսի և տեխնոլոգիայի համալսարանում, Սուջավայի Ստեֆան Սել Մարե համալսարանում (Բումինիա), Միգրացիայի միջազգային կազմակերպության Երևանյան գրասենյակում, Աշխատանքի միջազգային կազմակերպության վերապատրաստումների կենտրոնում (Իտալիա), Նոիդայի Վ.Վ.Գիրիի անվան աշխատանքի ազգային ինստիտուտում (Հնդկաստան), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում և այլն:

Արենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 172 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության առաջաբանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, արդյունքների գործնական նշանակությունը, հետազոտության փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Աշխատուժի միջազգային միգրացիան՝ որպես համաշխարհային տնտեսության զարգացման գործոն»** գլխում ներկայացվել է աշխատուժի միջազգային միգրացիայի տեսամեթոդաբանական հիմքերը և տնտեսագիտական բովանդակությունը, գնահատվել է աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, ինչպես նաև ուսումնասիրվել է աշխատուժի միգրացիայի միջազգային, տարածաշրջանային և պետական կարգավորման մեխանիզմները:


Ժամանակակից փոխկապակցված աշխարհում արդիական մարտահրավերներ են միջազգային միգրացիայի աճող տեմպերն ու ընդգրկման լայն շրջանակը:

Գծապատկեր 1.-ում ներկայացված է 1970-2020 թթ. համաշխարհային բանկի վիճակագրական տվյալներով գնահատված համաշխարհային տնտեսական աճի, դրամական փոխանցումների ու զարգացման պաշտոնական աջակցությունների միջև կոռելյացիոն կապը: Իրականացված

կոռելյացիոն վերլուծությունը ցույց է տալիս, որ զարգացման պաշտոնական աջակցությունների և դրամական փոխանցումների միջև կապը 0.9 է, ինչը խոսում է բավական սերտ կապի մասին: Միևնույն ժամանակ, տնտեսական աճի և դրամական փոխանցումների միջև կապը ստացվել է -0.20, իսկ տնտեսական աճի և զարգացման պաշտոնական աջակցությունների միջև՝ -0.26:


Գծապատկեր 1.

Զարգացման պաշտոնական աջակցությունների, դրամական փոխանցումների և տնտեսական աճի միջև կոռելյացիոն կապը



1991-2020 թթ. զբաղվածության մակարդակն աշխարհում կազմել է միջինը 59.9%: Ընդ որում, 1991 թ. համեմատ զբաղվածության մակարդակը 2020 թ. նվազել է 7.5%-ային կետով, իսկ ընդհանուր միտումը նվազող է: COVID-19 համավարակի տարածմամբ պայմանավորված՝ 2020 թվականին զբաղվածության մակարդակն աշխարհում նվազել է 2.7 տոկոսային կետով՝ կազմելով 54.8%: Վերջինիս զուգակցումը հիմնականում աճող տեմպով միջազգային միգրացիոն հոսքերի և դրամական փոխանցումների հետ ցույց է տալիս, որ համաշխարհային տնտեսությունում սրվում է մարդկանց աշխատանքով ապահովման խնդիրը: Իրականացված տնտեսաչափական վերլուծության շնորհիվ բացահայտվել է ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքի և դրամական փոխանցումների միջև կապը: Վերլուծության արդյունքում ստացվել է, որ ցուցանիշների միջև առկա է սրտ կապ՝ կոռելյացիայի գործակիցը ($R=0.86$): Գծապատկեր 1.9-ը ևս ցույց է տալիս այս ցուցանիշների միջև դրական կապը, թեև կոռելյացիայի նշանակալիությունը 0.01 է:

ՕՈՒՆ-ների զուտ ներհոսքի և դրամական փոխանցումների միջև կոռելյացիոն կապը




Ատենախոսության երկրորդ «ՀՀ միգրացիոն քաղաքականությունը ԵԱՏՄ անդամակցության համապեքստում» գլխում ուսումնասիրվել են աշխատուժի միգրացիոն գործընթացները ԵԱՏՄ երկրներում: Բացի դրանից, իրականացվել է Հայաստանի միգրացիոն իրավիճակի համապարփակ վերլուծություն, ինչպես նաև քննարկվել են դեպի ԵԱՏՄ երկրներ միգրացիան պայմանավորող հիմնական գործոններն ու խնդիրները ՀՀ-ում: Մանրամասն նկարագրվել է միգրացիոն հոսքերի կարգավորման ինստիտուցիոնալ հիմքերը ԵԱՏՄ-ում, ինչպես նաև իրականացվել է ԵԱՏՄ երկրների տնտեսությունների համեմատական վերլուծությունը միգրացիոն գործընթացների համատեքստում:

Վերջին մի քանի տարիներին Հայաստանից միգրացիոն հոսքերի ընդլայնման միտումներն ահազանգ են խորքային ուսումնասիրելու և վերլուծելու արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների հիմնական դրդապատճառները և այն խնդիրները, որոնք նրանք մատնանշում են Հայաստանում և նպատակակետ հանդիսացող երկրներում: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ասպիրանտների հետազոտությունների աջակցություն ծրագիր-2016» մրցույթի շրջանակներում Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարանի և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի աջակցությամբ իրականացվել է դաշտային աշխատանք՝ համապատասխան հարցաթերթի մշակմամբ: Հետազոտության ընտրանքում ընդգրկվել է 1526 միգրանտ կամ պոստեմիգրանտ՝ Հայաստանի 10 մարզերից: Վերջին 1 տարում ԵԱՏՄ երկրներում գտնվող հարազատներից, բարեկամներից, ընկերներից ստացվող դրամական աջակցության ամսական միջին չափը կազմել է մոտ 216000 դրամ: ԵԱՏՄ երկրներից ստացվող դրամական աջակցությունը հարցվող ընտանիքներն օգտագործում են կոմունալ վճարները կատարելու համար (20.6%), սննդի ապահովման համար (20.1%), հագուստ գնելու համար (15.8%), առողջապահական խնդիրներ լուծելու նպատակով (13%), պարտքերի մարման համար (11.1%):

Գծապատկեր 3.

ԵԱՏՄ երկրներից ստացվող դրամական աջակցության ամսական միջին չափը, (%)



Ուսումնասիրվել է նաև միգրանտների կողմից կոնկրետ երկրի նախընտրության պատճառները, համաձայն որի՝ հարցվողները կարծում են, որ իրենց նախընտրած երկրում կգտնեն բարձր վարձատրվող աշխատանք (պատասխանների 30.4%): Երկրորդ կարևոր պատճառը երկրի ընտրության համար այդ երկրի լեզվին տիրապետելն է (18.9%): Կարևոր է նաև ընտրված երկրում բնակվող կամ գտնվող բարեկամների, ընկերների, ծանոթների առկայությունը (13.9%): Արտագնա աշխատանքի մեկնման երկրի նախընտրության համար կարևոր պատճառներից են այնտեղ մասնագիտությամբ աշխատանք գտնելը (11.8%) և երկիր մուտք գործելու մատչելիությունը (12.3%):

Այսպիսով, ամփոփելով հետազոտության հիմնական արդյունքները, պետք է նշել, որ արտագնա աշխատանքի մեկնողների կողմից արտերկրում իրականացվում է հիմնականում բանվորական աշխատանք՝ անկախ նրանց մասնագիտական կրթությունից: Չնայած միգրացիայի


արդյունքում ստացած փոքր գումարներին և մի շարք այլ խնդիրներին՝ միգրանտներն, ընդհանուր առմամբ, բավարարված են իրենց վաստակած գումարից, ինչը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում մնալով, նրանք հույս չունեն վաստակելու նման գումարներ:

Աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը ԵԱՏՄ երկրների տնտեսությունների վրա գնահատելու համար իրականացվել է մի շարք կարևոր վիճակագրական ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ բացահայտելով միգրացիայի համատեքստում տնտեսական գործընթացների միջև առկա փոխառնչությունները:

2006-2020թթ. ընթացքում Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ այլ երկրներ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները միջինը կազմել են ընդհանուր փոխանցումների 9.1%-ը: Ընդ որում, Ռուսաստանում տարբեր փուլերում տեղի ունեցած տնտեսական իրադարձություններով պայմանավորված (համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, տնտեսական պատժամիջոցներ, նավթի համաշխարհային գների անկում), Ռուսաստանից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները դեպի ԵԱՏՄ անդամ այլ երկրներ նվազել են:

Գծապատկեր 4.

Ռուսաստանից դեպի ԵԱՏՄ այլ երկրներ ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները (մլն ԱՄՆ դոլար) և դրանց մասնաբաժինն ընդհանուր փոխանցումների մեջ (%)²



ԵԱՏՄ երկրների գործազրկության և աղքատության մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աղքատության համեմատաբար բարձր մակարդակ ունեն Հայաստանն ու Ղրղզստանը: Այդուհանդերձ,

² Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ https://www.cbr.ru/statistics/macro_itm/svs/ (մուտք՝ 22.04.2022 թ.)

երկու երկրներում դիտարկվող 2012-2020 թթ. ընթացքում աղքատության մակարդակը նվազման միտում ունի: Մասնավորապես, Հայաստանում աղքատության մակարդակը 2012 թ. համեմատ 2020 թ. նվազել է 6.7%-ային կետով՝ կազմելով 25.7%, իսկ Ղրղզստանում՝ 12.4%-ային կետով՝ կազմելով 25.6%³:

2020 թ. Հայաստանում նվազագույն աշխատավարձը միջին աշխատավարձի 33.8%-ն է, ինչը ԱՄԿ-ի կողմից հաշվարկված 0.4-ին մոտ է: Բեւառուում արձանագրվել է Հայաստանի ցուցանիշին բավական մոտ ցուցանիշ. երկրում 2020թ. նվազագույն աշխատավարձի մասնաբաժինը միջին աշխատավարձի մեջ կազմել է 29.8%: Այս առումով, ԵԱՏՄ երկրների մեջ 2020 թ. բավական վատ դիրքերում են Ղրղզստանն ու Ղազախստանը: Մասնավորապես, Ղազախստանում 2020 թ. միջին ամսական անվանական աշխատավարձը գերազանցել է նվազագույն աշխատավարձի ցուցանիշը մոտ 5 անգամ, իսկ Ղրղզստանում՝ ավելի, քան 11 անգամ:

Այսպիսով, ԵԱՏՄ-ն ինտեգրացիոն գործընթացների խորացման և նոր հնարավորությունների ընձեռնման հարթակ է, որը կբերի անդամ պետությունների տնտեսական ներուժի իրացմանն ու միջազգային մրցունակության բարձրացմանը:

Ատենախոսության երրորդ **«ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության բարելավման հիմքերը և ՀՀ միգրացիոն քաղաքականության հեռանկարները»** գլխում ներկայացվել է ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականության բարեփոխումների հիմնուղիները: Իրականացվել է նաև ՀՀ միգրացիոն հիմնախնդիրների գործոնային հետազոտություն, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ միգրացիոն քաղաքականության բարելավման հնարավորությունները:

Մեծ նշանակություն ունեն ԵԱՏՄ անդամ երկրներում աշխատանքային ռեսուրսների ներգրավման և օգտագործման ուղղությամբ վարվող արդյունավետ քաղաքականության առկայությունը, ԵԱՏՄ տարածքում միգրանտների օրինական գործունեությունը, միգրանտների կողմից իրականացվող աշխատանքային գործունեության հստակ կանոնակարգումը, տրամադրվող սոցիալական արտոնությունների փաթեթի մշակումը և, իհարկե, երրորդ երկրներից անօրինական միգրացիայի դեմ պայքարը: ԵԱՏՄ-ում միգրացիան չկարգավորված բնույթ ունի՝ չնայած իրականացվող նախաձեռնություններին և բարեփոխումներին: Սա հանգեցրել է ոչ ֆորմալ զբաղվածության մեծ տեսակարար կշռի, միգրանտների

³ Եվրասիական տնտեսական խորհրդի պաշտոնական կայք՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/econstat/Pages/living_standard.aspx (մուտք՝ 02.04.2022 թ.)

աշխատանքային իրավունքների խախտումներին, կարգավորման մեխանիզմների անհամաչափության:

Միգրացիայի արդյունավետ կարգավորումը մեծ կարևորություն ունի ԵԱՏՄ անդամ պետությունների զարգացման համար, իսկ սխալները բավական թանկ կարող են լինել: Այս փուլում արդեն կարևոր նշանակություն ունի ԵԱՏՄ անդամ երկրների միգրացիոն օրենսդրության համահարթեցումը, որտեղ առկա են մի շարք անհամապատասխանություններ: ԵԱՏՄ անդամ երկրների համար օրակարգային է միգրացիոն կայուն ենթակառուցվածքների առկայությունն ու անհրաժեշտությունը: ԵԱՏՄ շրջանակներում միգրացիոն հոսքերի կարգավորման համար մեծ հնարավորություն կարող է լինել միգրացիոն տեղեկատվական համակարգի ստեղծումը: Բավական դժվար կառավարելի է միգրացիոն հոսքերի հաշվառումը և վիճակագրության վարումը: Դժվար է հստակ պատկերացում կազմել ԵԱՏՄ ներսում միգրացիոն գործընթացների հիմնական կառուցվածքի և իրավիճակի մասին: Աղավաղվում է ԵԱՏՄ ընդհանուր միգրացիոն համապատկերը և ավելի խնդրահարույց է դառնում ԵԱՏՄ անդամ երկրների կտրվածքով սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա միգրացիայի ազդեցության գնահատումը: Այս համատեքտում, առաջնային նշանակություն ունի ԵԱՏՄ երկրների վիճակագրական համակարգերի համահարթեցումը, որը հնարավորություն կտա հստակեցնել «աշխատող միգրանտ» կարգավիճակը, որով և հնարավոր կլինի գնահատել իրավիճակն ու սահմանել անհրաժեշտ լուծումները:

Հայաստանի պարագայում առկա է ժողովրդագրական բավական լուրջ ճգնաժամ՝ պայմանավորված ինչպես Հայաստանի մշտական բնակչության թվի, այնպես էլ ծնելիության ընդհանուր գործակցի նվազման միտումներով: Հայաստանում վառ ընդգված են միգրացիոն գործընթացները, որոնք իրենց ուղղակի և անուղղակի ազդեցությունն են թողել երկրի սոցիալ-տնտեսական միջավայրի վրա: Հետևաբար, Հայաստանում միգրացիոն գործընթացների պետական կարգավորումը բազմակողմանի մոտեցում է պահանջում՝ ներառելով երկրի միջազգային հարաբերությունները, տնտեսությունը, ֆինանսները, կրթությունը, սոցիալական պաշտպանությունը: Հայաստանի համար միգրացիոն գործընթացների կարգավորումը մեծ կարևորություն ունի պետական մարմինների բոլոր օղակների կտրվածքով, ինչը հնարավորություն կտա արդյունավետ վերահսկել միգրացիոն հոսքերը, իրականացնել պարբերական մշտադիտարկում և կառավարել դրանք:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ատենախոսության շրջանակներում հանգել ենք հետևալ **եզրակացություններին**:

Միգրացիոն իրավիճակը Հայաստանում բավական սուր է, իսկ էմիգրացիայի լայնածավալ առկայությունը սպառնում է ապաքնակեցման հեռանկարով: Հայաստանի ժողովրդագրական հիմնախնդիրների դիտանկյունով՝ միջազգային միգրացիայի ընթացիկ իրավիճակի և հիմնական միտումների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անկախացումից հետո Հայաստանի բնակչությունն ունի միգրացիոն հակվածություն:

Առանձին անհատի մակարդակով միգրացիայի պատճառների և հետևանքների դաշտային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտագաղթի ցանկությունը և ընկալումները պայմանավորված են Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավիճակին վերաբերող խորքային համակարգային խնդիրներով: Հետևաբար, միգրացիան կանխելուն ուղղված միջոցառումների հիմքում անհրաժեշտ է դնել այս խնդիրների բացահայտումն ու հստակ սահմանված մեխանիզմներով լուծումը:

ԵԱՏՄ երկրների տնտեսական իրավիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի և Ղրղզստանի տնտեսությունները անմիջական կախվածություն ազդեցություն ունեն Ռուսաստանից դրամական փոխանցումների ծավալից: Միևնույն ժամանակ, Ռուսաստանում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում (համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, տնտեսական պատժամիջոցներ, նավթի համաշխարհային գների անկում), Ռուսաստանից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումները դեպի ԵԱՏՄ անդամ այլ երկրներ նվազել են:

Հայաստանի միգրացիոն քաղաքականության բարելավումն առանցքային նշանակություն ունի տնտեսության զարգացման համար, քանի որ միգրացիոն գործընթացների դիտարկվող տեմպերը իրական մարտահրավեր են դարձել և հանգեցրել են լուրջ ժողովրդագրական ճգնաժամի: Միգրացիոն գործընթացների պետական կարգավորումը անհրաժեշտ է իրականացնել պետական մարմինների միջև գործընթացների բաշխման համահարթ սկզբունքով: Միգրացիոն հոսքերի կառավարման համար անհրաժեշտ է միակենտրոն կարգավորման մոդել, որը թույլ կտա ունենալ միգրացիոն հոսքերի վերաբերյալ տեղեկատվական շտեմարան:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Տ.Վարդանյան, «Աշխատուժի միջազգային միգրացիայի առկա վիճակը, դինամիկական ազդեցությունը համաշխարհային տնտեսության

վրա», Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում: ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, Գ 606 I I / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2015, 714 էջ, ISBN 978-9939-61-135-8, էջ 341-346, 6 էջ:

2. Т.Варданыан “Социально-экономические последствия трудовой миграции для Армении в рамках Евразейско экономического союза”, «Трансформация системы мирохозяйственного взаимодействия в контексте современных глобальных вызовов»: материалы Международной научно-практической конференции профессорско-преподавательского состава, молодых ученых, аспирантов, магистрантов и студентов, 17-18 мая 2016г. – Ростов н/Д: изд-во ООО Изд-во ООО «АзовПечать», 2016.-328 с. ISSN 978-5-4382-0255-4, стр. 92-94, 4 стр
3. T.Vardanyan "Analyze of Demographic profile and migration of the Republic of Armenia", International economic relations and sustainable development : monograph / edited by Dr. of Economics, Prof. O. Prokopenko, Ph.D in Economics T. Kurbatova. – Ruda Śląska: Drukarnia i Studio Graficzne Omnidium, 2017. – 272 p., ISBN 978-83-61429-11-1, p.203-209, 7 p.:
4. Տ.Վարդանյան, «ԵԱՏՄ երկրների (Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան) միգրացիոն դաշտը կարգավորող օրենսդրության համեմատական վերլուծություն», «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, դեկտեմբեր, 2017թ., ISSN1829-3689, էջ 151-155, 6 էջ:
5. Տ.Վարդանյան, «Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների խնդիրների վերհանումը», «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես 2017 #3 Հուլիս – Սեպտեմբեր, ISSN 1829-2828, 9-17 էջ, 9 էջ
6. Ավետիսյան Թ., Սարգսյան Ա., «Նվազագույն աշխատավարձի և ընտրովի մակրոցուցանիշների փոխառնչությունների վերլուծությունը (ՀՀ օրինակով)», «Բանբեր ՀՊՏՀ», 2017 N4, ISSN 1829-0280, էջ 23-34, 12 էջ:
7. Հախվերդյան Դ., Վարդանյան Տ., «Աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա», «Բանբեր ՀՊՏՀ», 2018 N2, ISSN 1829-0280, էջ 70-77, 8 էջ:
8. Di Yuna, Vardanyan T., “Inclusive Growth: Progress and Experience Of China”, «Բանբեր ՀՊՏՀ», 2019 N2, ISSN 1829-0280, էջ 122-131, 10 p.:
9. Վարդանյան Տ., «Միգրացիոն քաղաքականության բարելավման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում», «Բանբեր ՀՊՏՀ», 2019 N3, ISSN 1829-0280, էջ 48-57, 10 էջ

10. Հախվերդյան Դ., Վարդանյան Տ., «Հայաստանի միգրացիոն հոսքերի համապարփակ վերլուծություն», «Բանբեր ՀՊՏՀ», 2020 N1, ISSN 1829-0280, էջ 91-102, 12 էջ:
11. Փախյան Ա., Աղաջանյան Ս., Միքայելյան Տ., Հարությունյան Ա., «Թուրքիայի կողմից հնարավոր ապաշրջափակման ազդեցությունը Հայաստանի տնտեսության զարգացման վրա» «Բանբեր ՀՊՏՀ», 2021 N5, ISSN 1829-0280, էջ 128-142, 16 էջ:
12. Վարդանյան Տ., «Հայաստանի միգրացիոն իրավիճակի համապարփակ վերլուծություն», «Բանբեր ՀՊՏՀ», 2021 N6, ISSN 1829-0280, էջ 150-160, 11 էջ:
13. Nazaryan G., Vardanyan T., “Labor migration processes and the institutional basis for their regulation in EEU countries”, «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես 2022 #1 հունվար-մարտ, ISSN 1829-2828, 217-226 էջ, 9 p.:

Татевик Григорьевна Варданян
**ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В
ЕВРАЗИЙСКОМ ЭКОНОМИЧЕСКОМ СОЮЗЕ (НА ПРИМЕРЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.06 «Международная экономика».

Защита диссертации состоится в 22 сентября 2022 года в 14.00, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу 0025, г.Ереван, ул. Налбандяна, 128.

АННОТАЦИЯ

XXI век можно охарактеризовать как период мобильности, и одним из важнейших ее проявлений сегодня является трудовая миграция, которая была и остается неотъемлемой частью истории человечества. В целом трудовая миграция является достаточно серьезным вызовом для Армении, где за 30 лет после обретения независимости в основном наблюдается отрицательное сальдо. Анализ причин миграционного поведения населения Армении требует достаточно системного подхода и в целом их можно разделить на две большие группы: экономические и неэкономические мотивы. Членство Армении в 2015 году в Евразийском экономическом союзе (ЕАЭС) создало необходимость новых институциональных изменений. В этом контексте уточнение механизмов регулирования трудовой миграции стоит на повестке дня как для всего ЕАЭС, так и для самой Армении, являющейся одной из стран, «впрыскивающих» рабочую силу в интеграционное объединение. Вышеперечисленные причины делают важным и необходимым изучение вопросов регулирования трудовой миграции для Армении, что обосновывает актуальность темы.

Цель и задачи исследования. Основной целью диссертации является определение проблем, связанных с регулированием трудовой миграции в ЕАЭС, особенно в Армении, и поиск возможных эффективных решений. Для достижения этой цели были предложены и решены следующие задачи.

- ✓ изучить методологические основы трудовой миграции в профессиональной литературе и дать оценку их актуальности;
- ✓ Изучить институциональную основу международного, регионального и государственного регулирования трудовой миграции, изучив международный опыт и возможности его локализации в Армении;

- ✓ На основании имеющихся исследований выявить основные факторы, определяющие миграцию из Армении в другие страны ЕАЭС;
- ✓ Оценить влияние трудовой миграции на конкурентоспособность экономик стран ЕАЭС с учетом основных социально-экономических показателей государств-членов;
- ✓ Определить пути совершенствования миграционной политики Армении, а также спрогнозировать перспективы развития евразийской интеграционной политики.

Научная новизна диссертации. Научная новизна диссертации заключается в следующих основных положениях:

- На основе данных 1970-2020 гг. были выявлены корреляции между мировым экономическим ростом, международными денежными переводами и финансовой помощью, полученной на развитие, на основе отдельных экономических моделей оценивались корреляции между денежными переводами и уровнем образования, а также чистым притоком ПИИ, денежных переводов и уровнем занятости;
- Путем опросов домашних хозяйств, проведенных во всех регионах Армении, выявлены основные мотивы и проблемы тенденций расширения миграционных потоков из страны в страны ЕАЭС, дана их количественная оценка;
- Оценены масштабы воздействия трудовой миграции на экономику стран ЕАЭС, выявлены взаимосвязи между экономическими процессами и показателями в контексте миграции (экономический рост, денежные переводы физических лиц, уровень безработицы и бедности, минимальная и среднемесячная номинальная заработная плата).
- В рамках ЕАЭС разработаны институциональные механизмы регулирования миграционных потоков, поднимающие основные вопросы, препятствующие регулированию отрасли, и предлагающие основные пути реформирования миграционной политики ЕАЭС и возможные сценарии их воздействия.
- Определены и обоснованы целевые подходы к разработке и реализации миграционной политики в контексте поощрения иммиграции и улучшения демографической ситуации для совершенствования процессов миграционной политики в Армении.

Tatevik Grigor Vardanyan

LABOUR MIGRATION REGULATION ISSUES IN EURASIAN ECONOMIC UNION (IN THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA)

Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the specialty 08.00.06 “International Economics”.

The defense of the thesis will take place at 14:00, on 22th of September at 014 Council of Economics of SCC RA at the Armenian State University of Economics. Address:128 Nalbandyan St., 0025, Yerevan, Armenia.

The 21st century can be described as a period of mobility, and one of its most important manifestations today is the migration of labor, which has been and remains an integral part of human history. In general, labor migration is a rather serious challenge for Armenia, where in the 30 years after independence there is mainly a negative balance. The analysis of the reasons for the migration behavior of the population of Armenia requires a rather systemic approach and, in general, it can be classified into two major groups: economic and non-economic motives.

2015 Armenia's membership in the Eurasian Economic Union (EEU) has created the need for new institutional changes. In this context, the clarification of the mechanisms for regulating labor migration is on the agenda both for the whole EEU and for Armenia itself, which is one of the countries "injecting" labor into the integration union. Above mentioned reasons make it important and necessary to study the issues of labor migration regulation for Armenia, which justifies the urgency and actuality of the topic.

The aim of the dissertations is to identify the problem related to the regulation of labor migration in the EAEU, especially in Armenia, and to find possible effective solutions. To achieve this aim, the following goals were proposed and solved:

- ✓ to study the methodological foundations of labor migration in the professional literature and assess their relevance;
- ✓ to study the institutional framework of international, regional and state regulation of labor migration, having studied international experience and the possibilities of its localization in Armenia;
- ✓ based on the available research, identify the main factors that determine migration from Armenia to other EAEU countries;

- ✓ to assess the impact of labor migration on the competitiveness of the economies of the EAEU countries, taking into account the main socio-economic indicators of the Member States;
- ✓ to determine ways to improve the migration policy of Armenia, as well as predict the prospects for the development of the Eurasian integration policy.

The scientific novelty of the thesis is expressed in the following:

- Based on data from 1970-2020, correlations between world economic growth, international remittances and official development assistance were identified, correlations between remittances and education levels, as well as net inflows of FDI, remittances and the level of employment were calculated;
- Through household surveys conducted in all regions of Armenia, the main motives and problems of the tendencies for the expansion of migration flows from the country to the EAEU countries were identified, and their quantitative assessment was given;
- The scale of the impact of labor migration on the economy of the EAEU countries was assessed, the relationship between economic processes and indicators in the context of migration (economic growth, remittances from individuals, unemployment and poverty, minimum and average monthly nominal wages) was identified.
- Within the framework of the EAEU, institutional mechanisms for regulating migration flows have been developed that raise the main issues that hinder the regulation of the industry and offer the main ways to reform the migration policy of the EAEU and possible scenarios for their impact.
- Target approaches to the development and implementation of migration policy in the context of encouraging immigration and improving the demographic situation in order to improve the processes of migration policy in Armenia have been identified and substantiated.

